

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

‘ ___ ’ _____ 2021 թ. N ___ -Ա

**ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, «ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼԻՐ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետը, 67-րդ և 68-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Հ. Մանանդյան փողոց 41 հասցեում գտնվող 9 169 623 566 ՀՀ դրամ սկզբնական արժեքով 3658.9 քառ. մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքը /տարածքում առկա են նաև 5421,5 քառ.մետր ընդհանուր մակերեսով ինքնակամ կառուցված շինություններ/ և դրա զբաղեցրած, սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ 130 500 661 ՀՀ դրամ կադաստրային արժեքով 2.88463 հա հողատարածքը (այսուհետ՝ անշարժ գույք) և 7017110.13 ՀՀ դրամ սկզբնական արժեքով 30 հատ շարժական գույքը՝ համաձայն հավելվածի հետ վերցնել «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունից (այսուհետ՝ Ընկերություն) և թողնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում Ընկերության հետ կնքել 2020 թվականի մայիսի 20-ին կնքված ոչ բնակելի տարածքի

անհատույց օգտագործման թիվ 22/0020 պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր)՝ դրանում նախատեսելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման Ընկերության միջոցների հաշվին,

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ քաղ. Երևան, Հ. Մանանդյան փողոց 41, պետական գրանցման համարը՝ 269.120.1073352, ՀՎՀՀ 02272655):

4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողով՝ կազմում ընդգրկելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (երկու անդամ՝ հանձնաժողովի նախագահ և անդամ-քարտուղար) ներկայացուցիչներին:

5. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ լուծարման հանձնաժողովի ստեղծումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համապատասխան փաստաթղթերի և գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, արժեթղթերի և գույքային իրավունքների հանձնումը լուծարման հանձնաժողովին:

6. Սահմանել, որ՝

1) պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո դեբիտորական պարտքերի ստացման և այլ պահանջների իրավունքները վերապահվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը.

2) պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը՝ առկայության դեպքում, հանձնվում է Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ն.ՓԱՇԻՆՅԱՆ

Ց Ա Ն Կ

**«ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ
 ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՀԵՏ ՎԵՐՑՎՈՂ ԳՈՒՅՔԻ**

| NN ը/կ | Անվանումը | Չափի միավորը | Տարեթիվը | Քանակը | Գինը (դրամ) | Սկզբնական արժեքը (դրամ) | Կուտակված մաշվածությունը (դրամ) | Հաշվեկշռային արժեքը (դրամ) |
|-----------|--|-----------------|----------|--------|----------------|-------------------------------|---------------------------------------|----------------------------------|
| 1. | ԳԱՁ-31105 Սեդան ավտոմեքենա | հատ | 2015 թ. | 1 | 4295000 | 4295000.00 | 4295000.00 | 0.00 |
| 2. | Տեսախցիկ DS- 2CD2420F-I | հատ | 2016 թ. | 3 | 68333.33 | 204999.99 | 67120.98 | 137879.01 |
| 3. | Տեսախցիկ DS- 2CD2020F-I | հատ | 2016 թ. | 3 | 72500 | 217500.00 | 71213.70 | 146286.30 |
| 4. | Ցանցային բաժանարար JG537A HP 1910-8- PoE+Switch | հատ | 2016 թ. | 1 | 179166.67 | 179166.67 | 58662.64 | 120504.03 |
| 5. | Տեսագրող սարք DS- 7608NI- E2+HDD seagate 2TB 64mbx2 | հատ | 2016 թ. | 1 | 166666.67 | 166666.67 | 54569.89 | 112096.78 |
| 6. | Թվային ընդունող և ձայնագրող սարք «Հիկվիժիոն» | հատ | 2016 թ. | 1 | 40000 | 40000.00 | 8064.52 | 31935.48 |
| 7. | Տեսախցիկ «Հիկվիժիոն» | հատ | 2016 թ. | 4 | 35000 | 140000.00 | 28225.80 | 111774.20 |
| 8. | Տեսախցիկ «Հիկվիժիոն» | հատ | 2016 թ. | 2 | 20000 | 40000.00 | 8064.52 | 31935.48 |
| 9. | Մոնիթոր LED 20 AQC 2043F | հատ | 2012 թ. | 2 | 52500 | 105000.00 | 105000.00 | 0.00 |
| 10. | Շարժական | հատ | 2012 թ. | 6 | 26462.8 | 158776.80 | 158776.80 | 0.00 |

| | | | | | | | | |
|-----|---|-----|---------|-----------|--------|-------------------|-------------------|------------------|
| | արժու | | | | | | | |
| 11. | Դրսի ցուցանակ Մարզական համալիր | հատ | 2015 թ. | 1 | 980000 | 980000.00 | 476301.08 | 503698.92 |
| 12. | Պատի ցուցանակ | հատ | 2015 թ. | 2 | 95000 | 190000.00 | 92344.08 | 97655.92 |
| 13. | Ցուցանակ | հատ | 2016 թ. | 2 | 95000 | 190000.00 | 65233.34 | 124766.66 |
| 14. | Բենզինային խոտինձիչ 4HP | հատ | 2016 թ. | 1 | 110000 | 110000.00 | 40839.08 | 69160.92 |
| | Ընդամենը | | | 30 | | 7017110.13 | 5529416.43 | 1487693.7 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Ա.ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, «ՄԱՐԶԱԶԵՎԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

2019 թվականի մարտի 21-ի № 270-Ա որոշմամբ «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպման ձևով վերակազմակերպվել է «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն):

Համաձայն որոշման անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով Ընկերությանն է հանձնվել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության Երևան քաղաքի Մանանդյան փողոցի № 41 հասցեում գտնվող՝ 9.169.623.566.0 դրամ սկզբնական և 7.350.621.856.0 դրամ հաշվեկշռային արժեքով 3658.9 քառ. մետր մակերեսով մարզական համալիրը և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 2.88463 հեկտար հողամասը, ինչպես նաև մարզական համալիրում գտնվող շարժական և անշարժ գույքը: Ընկերությանն ամրացված և փոխանցված գույքի հաշվին ձևավորված պետական սեփականություն հանդիսացող 100 տոկոս բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունը վերապահվել է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը: Ընկերության գործունեության նպատակը ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է: Սակայն, Ընկերության մարզակառույցը չի համապատասխանում միջազգային չափանիշներին, որի պատճառով հնարավոր չէ անցկացնել միջազգային և այլ բարձրակարգ մարզական միջոցառումներ: Մարզակառույցի թերձանրաբեռնվածության պատճառով, որը հետևանք է նաև համավարակի, խափանվել և Ընկերության հետագա բնականոն գերծունեությունը դարձել է անհնարին: Ոչ բավարար ֆինանսավորման պատճառով անհնար է դարձել պահպանել մարզակառույցի բարվոք վիճակը, վերանորոգել ու համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, ապահովել Ընկերության գործունեությունը: Հետևապես՝ առաջացել է Ընկերության լուծարման խնդիր:

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտեին և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ներկայացնելով 10-ամյա ներդրումային ծրագիր, համաձայն որի կազմակերպությունը նախատեսում է Հ. Մանանդյան փողոց 41 հասցեում գտնվող մարզահամալիրի վերակառուցման համար կատարել 1 240 000 Եվրոյին համարժեք ՀՀ դրամի ներդրումներ:

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության ներդրումներից հետո մարզահամալիրը կվերանորոգվի և կարդիականացվի՝ համապատասխանելով միջազգային չափանիշներին:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) տվել է իր համաձայնությունը տարածքը տրամադրելու և մարզակառուցյուն միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու համար ներդրում իրականացնելու վերաբերյալ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության առաջարկին:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը շրջանառության մեջ է դրել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, որում առաջարկվել է հետ վերցնել Ընկերության շենք-շինությունը և գույք, որոնք ձեռք է բերվել 2012-2016թ.թ.՝ 14 անվանում 30 հատ գույք, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 1487693.7 ՀՀ դրամ:

Ընկերությունը 2018-2020 թ.թ., որպես սեփականություն ձեռք է բերել՝ 53 անվանում մեքենա սարքավորումներ և 13 գրասենյակային ու տնտեսական գույք, որոնց ընդհանուր հաշվեկշռային արժեքը կազմում է 12265526 ՀՀ դրամ:

Հ. Մանանդյան փողոց 41 հասցեում գտնվող մարզահամալիրը նախկինում կոչվել է «ՄԻԿԱ» մարզահամալիր, ներկայումս Հայաստանի Հանրապետության սեփականությունն հանդիսացող շենք-շինությունները հաշվառված են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում, իսկ մարզահամալիրի ղեկավարումը իրականացնում է «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը: Մարզահամալիրի կառույցները կարիք ունեն վերանորոգման և արդիականացման:

Հ.Մանանդյան փողոց 41 հասցեում գտնվող մարզահամալիրը «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը հանձնելուց հետո նախատեսվում է «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կողմից մեծ գումարների ներդրումներ, մարզահամալիրի կապիտալ վերանորոգում և արդիականացում:

«Մարզաձեվերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը սեփականության իրավունքվ անշարժ գույք չունի:

««Մարզաձեվերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

««Մարզաձեվերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումից հետո ակնկալվում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Հ. Մանանդյան փողոց 41 հասցեում գտնվող անշարժ գույքը հետ վերցնել «Մարզաձեվերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունից և անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը: «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը կապահովի մարզադաշտի և դրա ենթակառուցվածքների համապատասխանելիությունը ՈՒԵՖԱ-ի 2-րդ կատեգորիայի մարզադաշտի: Կտեղադրի արհեստական խոտածածկով մարզումային խաղադաշտ, կապահովի ֆուտզալի ՈՒԵՖԱ-ի միջազգային ստանդարտների համապատասխան մարզահամալիր: կապահովի մարզադաշտի հասանելիությունը ինչպես պրոֆեսիոնալ, այնպես էլ սիրողական ֆուտբոլի մրցումների մասնակից ակումբների համար: Վերոնշյալ ֆուտզալի մարզահամալիրում կապահովի բասկետբոլի և վոլեյբոլի միջազգային մրցաշարերի չափանիշներին համապատասխանող գծանշումների և տեխնիկական միջոցների առկայությունը:

«Մարզաձեվերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, «ՄԱՐԶԱԶԵՎԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

| ՀՀ ֆինանսների նախարարություն | 21.04.2021թ. |
|---|--|
| | 01/11-1/5781-2021 |
| <p>ՀՀ ֆինանսների նախարարությունն ուսում նասիրել է ««Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և հայտնում է, որ առաջարկություններ չունի:</p> <p>Միաժամանակ, հայտնում ենք, որ «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2019թ. (հաշվետու տարի) գործունեության արդյունքներով 2020թ. ձևավորվել էր ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա 2,496,900.0 ՀՀ դրամ շահութաբաժնի պարտավորություն, որն Ընկերության կողմից մարվել է 2020թ. դեկտեմբերի 29-ին: Ըստ այդմ, ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N1194</p> | <p align="center">Չի ընդունվում</p> <p>Նախարարությունը առաջարկում է ՓԲԸ-ի լուծարման ընթացքում առաջացած պարտավորությունները (այդ թվում և ՀՀ պետական բյուջեի նկատմամբ) կարգավորել լուծարային գործընթացի շրջանակում, այլ ոչ թե՛ ՀՀ պետական բյուջեից ներգրավել լրացուցիչ միջոցներ:</p> |

որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N202-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված կարգի 37-րդ կետի 5-րդ ենթակետի հիմքով ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի նշված գումարը սահմանված ժամկետում (մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հոկտեմբերի 1-ը) չվճարելու համար կիրառվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը: Հետևաբար, Ընկերության պարտավորության մնացորդը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 2021թ. ապրիլի 20-ի դրությամբ կկազմի 10,641.2 դրամ, որն անհրաժեշտ է վճարել մինչև Ընկերության լուծարման գործընթացի սկիզբը: Ըստ այդմ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ չկատարված պարտավորությունների մասով գործող օրենսդրության համաձայն և օրենսդրությամբ սահմանված կարգով տոկոսների հաշվարկումը շարունակվում է մինչև պարտավորության մնացորդի ամբողջական մարումը կամ պարտավորության դադարումը, հետևաբար անհրաժեշտ է նաև առաջարկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն)՝ մինչև լուծարումն Ընկերության կողմից վերը նշված պարտավորության հնարավոր մարումներ իրականացնելու պարագայում տվյալ օրվա դրությամբ որպես տույժ հաշվարկված տոկոսների գումարային մեծությունը և դրանով պայմանավորված՝ մարման ենթակա

պարտավորության չափը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում նախապես (մինչև վճարում իրականացնելը կամ պարտավորության դադարման հիմքերի առաջանալը) ճշգրտել ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է Որոշման պահանջների կատարման շրջանակներում ապահովել լուծարման առաջարկվող Ընկերության 2020թ. գործունեության արդյունքներով շահութաբաժինների հաշվարկման համար անհրաժեշտ հաշվետվական փաթեթի ներկայացումը ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ՀՀ 2021թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների գծով հնարավոր պարտավորության առաջացման հարցը պարզելու համար:

Միաժամանակ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ այդպիսի պարտավորության առաջացման դեպքում հարկ է համապատասխան միջոցներ ձեռնարկել մինչև լուծարումն Ընկերության կողմից նաև դրանց մարումների ապահովման ուղղությամբ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

19. 04.2021 թ.

N ՍՊ/15.3/9452-2021

«Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը սկզբունքային առարկություններ չունի:

| | |
|---|--|
| <p>Միաժամանակ տեղեկացնենք, որ նախագիծը քննարկվել է նաև Պետական գույքի կառավարման կոմիտեի հետ, կից ներկայացնում ենք վերջինիս դիրքորոշումը:</p> | |
| <p>Պետական գույքի կառավարման կոմիտե</p> | |
| <p>«Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Պետական գույքի կառավարման կոմիտեն սկզբունքային առարկություններ չունի: Միաժամանակ հայտնում ենք, որ ցանկալի կլիներ Նախագծին կից հիմնավորման մեջ նշվեր տեղեկատվություն՝ ընկերության գույքի, այլ ակտիվների և պարտավորությունների մասին:</p> | <p style="text-align: center;">Ընդունվել է</p> <p>1. Որոշման նախագծի հիմնավորումը առաջարկին համապատասխան կատարվել է լրացում:</p> |
| <p>Անշարժ գույքի կադաստրի կոմիտե</p> | <p style="text-align: center;">13. 04.2020 թ. ՈՍԹ/2391-2021</p> |
| <p>Դիտողություններ և առաջարկություններ չունի</p> | |
| <p>ՀՀ արդարադատության նախարարություն</p> | <p style="text-align: center;">08.05.2021 թ. 01/27.1/11887-2021</p> |
| <p>Ի պատասխան Ձեր 2021 թվականի մայիսի 6-ի թիվ 01/20.1/9061-2021 գրության՝ հայտնում ենք, որ «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Հայաստանի</p> | |

Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից պետական փորձագիտական եզրակացություն չի տրամադրվում՝ ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ *փորձաքննության չեն ենթարկվում* պարտադիր պահուստավորման նորմատիվի կամ հատուկ տնտեսական նորմատիվների սահմանմանը, Կենտրոնական բանկի կողմից բանկային տոկոսի հաշվարկային դրույքի և բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը սահմանելուն ուղղված՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումների նախագծերը, պետական և համայնքային բյուջեների վերաբաշխման, ինչպես նաև բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների վերաբերյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը:

| | |
|--|-----------------------|
| ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչություն | 12.05.2021թ. |
| | 02/16.16/16271 |
| | -2021 |

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Նախագծի հիմնավորման մեջ ներառված չէ տեղեկատվություն 100 տոկոս պետական մասնակցությամբ «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիրկենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործունեության, խնդիրների (եթե այդպիսիք առկա են) վերաբերյալ, ինչպես նաև հիմնավորված չէ ընկերությունը լուծարելու նպատակահարմարությունը, այլ խոսվում է միայն ընկերությանն ամրացված գույքի օգտագործման մասին ընկերության լուծարումից հետո: Հիմնավորման մեջ խոսվում է 10-ամյա ներդրումային ծրագրի մասին, որն իրականացնելու համար ընկերությունը լուծարվում է, սակայն ծրագիրը կցված չէ: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշման հավելվածի 6.2-րդ կետի համաձայն հասարակական կազմակերպություններին անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում է, եթե հասարակական կազմակերպության կողմից առաջարկվող ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության ծրագրում ամրագրված՝ պետություն-մասնավոր հատված համագործակցության սկզբունքին և նպատակաուղղված է պետություն-մասնավոր հատված համագործակցության զարգացմանը՝ տնտեսական կամ սոցիալական որևէ ոլորտում:

Ընդունվել է

1. Նախագիծի հիմնավորումը առաջարկին համապատասխան ամբողջությամբ լրամշակվել է:

| | |
|--|--|
| <p>2. Նախագծում բացակայում է կարգավորում ընկերության նամրացված պետական գույքի վերաբերյալ:</p> | <p>Ընդունվել է 2. Նախագիծը լրամշակվել է և համաձայնացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտեի հետ:</p> |
| <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե</p> | <p>02.06.2021թ. ՍՊ//13831-2021</p> |
| <p>«Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ առաջարկում ենք՝</p> <p>1. Հաշվի առնելով, որ Նախագծով նախատեսվում է ոչ միայն լուծարել «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» ՓԲԸ-ն, այլև՝ ընկերությունից գույք հետ վերցնել՝ Նախագծի վերնագիրը համապատասխանեցնել բովանդակությանը:</p> | <p>Ընդունվել է 1. Նախագծի վերնագրում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն:</p> |
| <p>2. Նախագծի հավելվածի վերնագրում «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի» բառերը փոխարինել «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունից հետ վերցվող գույքի» բառերով:</p> | <p>Ընդունվել է 2. Նախագծի հավելվածի վերնագրում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն:</p> |
| <p>3. Նախագծի հիմնավորմամբ ներկայացնել</p> | <p>Ընդունվել է</p> |

| | |
|---|--|
| նաև «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» ՓԲԸ-ն լուծարելու անհրաժեշտությունը: | 3.Նախագծի հիմնավորումը ամբողջությամբ լրամշակվել է: |
| | |